կաբար երկիւղին, զոր միշտ կրած են և կը կրեն քրիստոնեայք, որոց հարկ կը լինի կանգնել իրենց աղօթատեղին այն աշխարհաց մէջ . . . : Ամենայն ինչ 'ի տաճարիս պարկեշտին է և աղքատ. չկայ առարկայ մի որ աչքի զարնէ: Տաճարիս ներքին կողմը նսեմ է և մթին, և այնպէս անձուկ որ հազիւ հարիւր մարդ կը հաւաքի: Գերեզմաննոցին արևելեան կողմէն եթէ գիտելու լինիս, այնպէս կ'երևայ՝ որ եկեղեցիս խորշի մէջ մտած է՝ շերևնալու համար »: Այս է երբեմն Հայոց Աշետևան Կուսին և այժմ Ռուսաց Ս. Նիկողայոս մատրան ստորագրութիւնը:

Մեր ազգային հատուկտոր յիշատակարաններէ ևս կ'երևի. համաձայն կարծեաց Ռոլլէի, որ այս եկեղեցւոյս տեղ՝ վաղեմի փայտաշէն եկեղեցի մի կայ եղել. « Էր եկեղեցիս այս փայտաշէն, վաղուց և հին ժամանակի ». ուր ապա, նոյն հիման վրայ, 1597 ին քարաշէն կանգնել են Կամենիցի ազգայինք: 1602 ին հրդեհին միջոց՝ մեծ վնաս կրած է եկեղեցիս. զոր ապա բազում գովեստից արժանաւոր Պ. Միխնոյ երէցփոխանը նորոգել է. ինչպէս եկեղեցւոյս նոյն և եպիսկոպոսարանին երդիքը ծածկելով, և չորս պատոյտի պատը նորոգելով և սպիտակ բռելով: Այսպէս կը զրէ ՌԾԱ թվ. յիշատակարանը. « Պր. Միխնոյ երեսփոխանն... վերևս ծածկել ետուր Ս. Աւետման Աստուածածնայ եկեղեցոյ. նոյնպէս և քարուկիր եպիսկոպոսարանին վերևս ծածկել ետուր . . . »,

Մինչև մեր դարուն սկիզբը (1811) այս եկեղեցիս ազգիս կառավարութեան ձեռքն եղած է, իբրև մատուռն կամ դուստր մեծ Վերափոխման եկեղեցւոյն, և Հայ քահանայք եղած են ժամա-